«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/140

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2025 թ. N 140

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Հայկական բժշկական ինստիտուտ» ԱԿ-Ի**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Տրտոգրադյան 14

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝

ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով, 05 մայիսի 2021 թ. N 43

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի հուլիսի 11-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Հայկական բժշկական ինստիտուտ» ԱԿ-ի (այսուհետ՝ ՀԲԻ, համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 18 փետրվարի 2025թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 20 մարտի 2025թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 28 ապրիլի 01մայիսի 2025թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 19 հունիսի 2025 թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 30 հունիսի 2025թ.

ՀԲԻ ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Հերմինե Գրիգորյան**-ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, Հայաստան, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Նինո Չիչիվեիշվիլի**-Վրաստանի Կրթության որակի բարելավման ազգային կենտրոնի փորձագետ, «Գեոմեդի» համալսարանի դասախոս, Վրաստան, փորձագիտական խմբի միջազգային անդամ:
- **Ռոլֆ Հոյսեր**-Բարձրագույն կրթության որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում միջազգային խորհրդատու, Շվեյցարիա, փորձագիտական խմբի միջազգային անդամ:
- **Նաիրա Հունանյան**-կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Մխիթար Գոշ Հայ-Ռուսական միջազգային համալսարանի դասախոս, Հայաստան, փորձագիտական խմբի անդամ:
- **Աստղիկ Համբարձումյան**-Երևանի պետական համալսարանի ուսանող, Հայաստան, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀԲԻ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով բուհի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ՄՈՒՀ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:

ՀԲԻ-ին վերջին տարիներին ձեռնարկել է բարեփոխումներ կրթական ծրագրերում՝ վերանայելով վերջնարդյունքներն ու ուսումնական պլանները, արդիականացնելով գնահատման ձևաչափերը և ուժեղացնելով տեսական ու գործնական բաղադրիչների միահյուսումը: Ուսուցման ինտեգրված մոտեցումների աստիճանական ներդրումը դրական միտում է: Այս բարեփոխումների կայուն իրականացումը հնարավոր է միայն համապատասխան որակավորում ունեցող

պրոֆեսորադասախոսական կազմի առկայության և մասնագիտական զարգացման շարունակական ապահովման պարագայում: Դասախոսների համալրումը հիմնականում կատարվում է փորձառու բժիշկներով, գործում են խրախուսման որոշ մեխանիզմներ: Միաժամանակ, պահանջվում է պլանավորված մոտեցում վերապատրաստումների և փորձի փոխանակման ուղղությամբ, հատկապես՝ ակտիվ ուսուցման մեթոդների արդյունավետ կիրառման համար: Կրթական ծրագրերի որակն ապահովելու կարևոր նախապայման է նաև համապատասխան նյութատեխնիկական միջավայրը: Բուհը դրական քայլեր է իրականացնում՝ ստեղծելով սիմուլյացիոն լաբորատորիաներ: Հաստատությանը խորհուրդ է տրվում ավարտին հասցնել «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների համար նախատեսված սիմուլյացիոն լաբորատորիաների ստեղծման գործընթացը՝ դրանք լիարժեք գործարկելով ուսանողների գործնական հմտությունների ձևավորման և գնահատման նպատակով: Հատկապես կարևոր է ապահովել OSCE (Կառուցվածքային օբյեկտիվ կլինիկական քննություն) ֆորմատի ներդրումը՝ որպես գործնական հմտությունների արժանահավատ գնահատման միջոց:

Միաժամանակ, նպատակահարմար է գրադարանի համալրումը արդիական մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև միջազգային գիտական գրադարանների և էլեկտրոնային շտեմարանների հետ համագործակցության ձևավորումը՝ ուսանողներին և դասախոսներին ապահովելով լայն հասանելիություն համաշխարհային գիտական ռեսուրսներին:

Նախատեսվող զարգացումները նպատակահարմար է համալրել նաև սեփական գիտական լաբորատորիաների հիմնելու նախաձեռնությամբ, ինչի համար կարևոր է դիտարկել այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ներգրավման հնարավորությունները՝ ապահովելով ռեսուրսների կայուն զարգացում և որակյալ կրթական միջավայր:

II. Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում:

Բուհի կառավարման ներկայիս մոդելը՝ հիմնված չորս հիմնադիրների կողմից իրականացվող ռոտացիոն ղեկավարման վրա, որի շրջանակում վերջիններս տարին մեկ փոխվում են ռեկտորի պաշտոնում, հանգեցնում է ռազմավարական գործընթացների խզման, որոշումների կայացման տարբեր մեթոդաբանությունների կիրառման և ընդհանուր վերահսկողության թուլացման: Չնայած հիմնադիրները պարբերաբար հանդիպումներ են ունենում, այդ քննարկումներն առանց վերահսկող մեխանիզմների չեն ապահովում կառավարման համակարգի շարունակականություն, թափանցիկություն և հաշվետվողականություն: Կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ամրապնդել ինստիտուցիոնալ կառավարման մեխանիզմները՝ հստակեցնելով ղեկավար մարմինների դերերն ու պատասխանատվությունները և ներդնելով մշտադիտարկման և արդյունքահեն հաշվետվողականության համակարգեր: Վերջին տարիներին որակի ներքին համակարգը զարգացել է, ներդրվել են տվյալների հավաքագրման մեխանիզմներ, մասնավորապես՝ կրթական ծրագրերի որակի բարելավման ուղղությամբ: Այս տեսակետից անհրաժեշտ է, որ որակի ապահովման համակարգը գնահատի բուհի բոլոր ուղղությունները, ներառյալ կառավարման համակարգը: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին բուհում զարգացել է որակի ապահովման համակարգը. ներդրվել են տվյալահենք մեխանիզմներ, հատկապես՝ կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը կարող է ծառայել որպես հենասյուն՝ բուհի կառավարման համակարգի գնահատման և բարելավման գործընթացներում: Այս համատեքստում կարևոր է, որ որակի ապահովման համակարգը ներառի կառավարման արդյունավետության պարբերական վերլուծություն՝ ապահովելով բուհի զարգացումը:

III. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը դեռևս ինստիտուցիոնալ զարգացման չեն նպաստում:

Չնայած ՀԲԻ-ում առկա են որոշակի նախաձեռնություններ համագործակցության ընդլայնման և գիտահետազոտական ակտիվության խթանման ուղղությամբ, միջազգայնացման և հետազոտության ներկայիս մակարդակները դեռևս բավարար չեն բուհի ներուժի լիարժեք իրացման համար: Միջազգայնացման գործընթացը որոշակի թերահավատությամբ է ընկալվում կառավարման մակարդակում, ինչի արդյունքում բացակայում է միջազգայնացման հստակ ռազմավարություն: Առկա չեն համատեղ կրթական կամ գիտահետազոտական նախագծեր այլ բուհերի հետ: Բուհը չունի միջազգային շարժունության ծրագրեր, իսկ ուսանողների և դասախոսների արտերկրում ուսումնական կամ գիտական փորձառությունները գրեթե չեն իրականացվում: Նույն պատկերն է նաև գիտահետազոտական գործունեության մասով: Չնայած առկա են խթանիչ մեխանիզմներ և որոշակի որակյալ արդյունքներ՝ դասագրքերի և մեթոդական ձեռնարկների տեսքով, բուհը դեռևս չունի գիտահետազոտական ռազմավարություն, արտահայտված գիտական պրոֆիլ, կենտրոնացված բյուջե և բավարար ենթակառուցվածք: Խորհուրդ է տրվում մշակել միջազգայնացման և հետազոտական ռազմավարություններ՝ ներառելով դրանք բուհի ընդհանուր զարգացման ծրագրում, ստեղծել շարժունության, լեզվական պատրաստվածության, համատեղ նախագծերի և հետազոտական համագործակցության հնարավորություններ:

4. Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Հայկական բժշկական ինստիտուտ» ԱԿ-ին շնորհել Ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՀԲԻ Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց:
3. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել բուհի Հոգաբարձուների խորհրդում:
4. Կազմակերպել բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀԲԻ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման հանձնաժողովի նախագահ՝ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., հուլիսի 11